

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀՔԿ-ՀՐՄԱՇՁԲ-22/2**

ք. Երևան

. 2022թ.

Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեն (այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս կոմիտեի գլխավոր քարտուղար Ա. Մկրտչյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և <<ԱԳԱԹ 777>> ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կապալառու), ի դեմս տնօրեն Դ. Եսայանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (երկուսը միասին՝ այսուհետ՝ Կողմեր), կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր) հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված **<< Արագածոտնի մարզի Ալազյազ համայնքում մոդուլային տիպի 144 տեղ հզորությամբ մսուր-մանկապարտեզի կառուցման** աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են << օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Աշխատանքի ողջ ծավալով կատարման ժամկետ է սահմանվում 270 օրացուցային օր:

Պայմանագրով նախատեսված աշխատանքի սկիզբը համարվում է կապալառուին օբյեկտը հանձնելու վերաբերյալ գրության հաջորդող աշխատանքային օրը՝ պայմանով, որ առկա են տեխնիկական և հեղինակային հսկողության ծառայությունների մատուցման համապատասխան պայմանագրերը /համաձայնագրերը/ և շինարարության թույլտվությունը:

Աշխատանքի կատարման երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից պայմանագրի արդյունքն ընդունելու օրվան հաջորդող օրվանից հաշված առնվազն 365 օրացուցային օրը:

1.3.1 Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով:

1.3.2 Պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված աշխատանքների կատարման ժամկետների մեջ չեն հաշվարկվում.

1.3.2.1 հեղինակային և/կամ տեխնիկական հսկողության պայմանագրերի լուծման դեպքում՝ պայմանագրերի լուծման օրվանից մինչև նոր պայմանագրերի կնքմանը հաջորդող օրն ընկած ժամանակահատվածը,

1.3.2.2 շինարարական աշխատանքների կատարումն անհնարին դառնալու օրվանից մինչև դրանց վերսկսելու օրն ընկած ժամանակահատվածը, որն արձանագրվում է տեխնիկական և հեղինակային հսկողություն իրականացնող կազմակերպությունների առաջարկության հիման վրա՝ պատասխանատու ստորաբաժանման կողմից տրված եզրակացությամբ:

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ << օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքները կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործվելիք նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները ներկայացված են պայմանագրի 5 Հավելվածում (Աղյուսակներ N 1 և N 2):

3.4.10 Շինարարական աշխատանքների կատարման ամբողջ ընթացքում շինարարական օբյեկտի տարածքը համալրի տեսախցիկներով, որոնք պետք է շուրջօրյա տեսանկարահանեն ամբողջ շինարարական հրապարակը՝ ընդգրկելով կառուցվող բոլոր տեսակի շինությունները առնվազն արտաքին բոլոր կողմերից, և այդ տեսախցիկներին հասանելիություն ապահովվի ինչպես պատվիրատուի, այնպես էլ պատվիրատուի նշած օգտատերերի համար: Սույն կետի խախտման դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի ընդհանուր գնի 0.1 (զրո ամբողջ մեկ տասնորդական) տոկոսի չափով:

3.4.11 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 20 օրացուցային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար:

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում:

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ:

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն: Ընդ որում՝ վերջին վճարման կատարողականի գումարը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում:

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 836 470 512 (ութե հարյուր երեսունվեց միլիոն չորս հարյուր յոթանասուն հազար հինգ հարյուր տասներկու) ՀՀ դրամ, որից 697 058 760 (վեց հարյուր իննսունյոթ միլիոն հիսունութե հազար յոթ հարյուր վաթսուն) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի պայմանագրում նշված հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,1 (զրո ամբողջ մեկ տասնորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 1 (մեկ) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,1 (զրո ամբողջ մեկ տասնորդական) տոկոսի չափով:

6.6 Տույժի հաշվարկման հիմքում ընկած աշխատանքային օրերի մեջ չեն ներառվում կատարողական ակտում արտացոլված ժամանակահատվածի վերջին օրվանից մինչև կատարողական փաստաթղթերը Պատվիրատուին հանձնելու ամսաթիվն ընկած մինչև հինգ աշխատանքային օրը, որը տրվում է Կապալառուին՝ տվյալ փուլի աշխատանքներն ավարտելուց հետո կատարողական փաստաթղթերը կազմելու և աշխատանքները տեխնիկական հսկողություն իրականացնող կազմակերպության կողմից հաստատվելու հետ կապված գործողությունները պատշաճ կերպով իրականացնելու համար:

6.7 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.8 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի ձեռքբերման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով (անհրաժեշտության դեպքում երաշխիքի ձևով ներկայացրած ապահովման ժամկետի երկարաձգումը հավաստող փաստաթղթի առկայությամբ):

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուց հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.10 Պայմանագրի վավերապայմաններում Կատարողի կողմից նշված բանկային տվյալները պետք է համապատասխանեն միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի ձևով պայմանագրի և/կամ որակավորման ապահովումների և դրանց կից վճարման պահանջագրերի բանկային տվյալներին:

8.11 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.12 Սույն պայմանագիրը կազմված է 7 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N4, N 4.1 և N 5 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.13 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.14 Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կապալառուի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ նախատեսված

Ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում են երաշխիքով կամ կանխիկ փողով: Ընդ որում, Կապալառուն համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ԱՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝

ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, հանրապետության հրապարակ
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011037596
ՀՎՀՀ 02565827

Գլխավոր քարտուղար՝


ԿԱՊԱԼԱՌՈՒ՝

<<ԱԳԱԹ 777>> ՍՊԸ
ք. Երևան, Շիրակի փակուղի 4
«Հայրիզնեսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1150000285850100
ՀՎՀՀ 01807983

Տնօրեն՝

_____ Ա. Մկրտչյան
(ստորագրություն)
Կ.Տ.

_____ Ք. Եսայան
(ստորագրություն)
Կ.Տ.



ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ
ՀՀ Արագածոտնի մարզի Ալագյազ համայնքում մոդուլային տիպի 144 տեղ հզորությամբ մսուր-մանկապարտեզի կառուցման աշխատանքների

Ք/Ք	Աշխատանքների անվանումը	Չափման միավորը	Քանակը	Միավորի արժեքը	Ընդամենը
1	2	3	4	5	6
Մանկապարտեզ					
1.Շինարարական աշխատանքներ					
Հողային աշխատանքներ					
1	III կարգի գրունտի մշակում էքսկավատորով կողալիցքով	մ ³	1195	750	896250
2	III կարգի գրունտի մշակում ձեռքով	մ ³	62	1200	74400
3	Գրունտի ետլիցք բուլդոզերով	մ ³	1195	1200	1434000
4	Գրունտի տոփանում	մ ³	1195	300	358500
5	Գրունտի ետլիցք ձեռքով, տոփանումով	մ ³	62	2500	155000
Ե/բ կառուցվածքներ					
Հիմքեր					
6	Նախապատրաստական շերտի իրականացում բազալտե խճից	մ ³	24	10200	244800
7	Նախապատրաստական շերտի իրականացում հիմքերի տակ B10 դասի բետոնից	մ ³	31.5	71000	2236500
8	Ե/բ միաձույլ հիմքերի պատրաստում B20 դասի բետոնից, սյուների տակ	մ ³	92	89400	8224800
9	Ամրան Ø8Ac-I	տ	1.006	515000	518090
10	Ամրան Ø12A500C	տ	2.757	432000	1191024
11	Ե/բ միաձույլ ժապավենային հիմքերի պատրաստում B20 դասի բետոնից	մ ³	35.2	105000	3696000
12	Ամրան Ø8Ac-I	տ	1.567	515000	807005
13	Ամրան Ø14A500C	տ	2.834	432000	1224288
14	Խարսխային հեղույսների տեղադրում Ø36 ГОСТ 24379.1-80	տ	2.282	2575000	5876150
15	Պնդոլակներ M36	հատ	544	2500	1360000
16	Շաղախ M200	մ ³	1.40	52000	72800
17	Բետոնե պատերի պատրաստում B15 դասի բետոնից /որմնախարիսխ/	մ ³	82	73000	5986000
18	Գրունտի հետ շփվող բոլոր մակերեսների քսուկային ջրամեկուսացում բիտումով 2 շերտ	մ ²	938	1350	1266300
19	Սյուների բետոնացում B15 դասի բետոնով	մ ³	41	72000	2952000
20	Ամրան Ø32A500C	տ	0.343	432000	148176
21	Ամրանային ցանց Ø4Bp-I, քայլը 100x100մմ	մ ²	240	1300	312000
Ամրանավորված ե/բ հատակ					
22	Ե/բ միաձույլ հատակի պատրաստում B15 դասի բետոնից	մ ³	108	90000	9720000
23	Ամրանային ցանց Ø4Bp-I, քայլը 100x100մմ	մ ²	1420	2000	2840000
Մետաղակառուցվածքներ					

1	2	3	4	5	6
24	Մետաղական սյուների տեղադրում	տ	34.454	200000	6890800
25	Քառակուսի կտրվածքի խողովակ 300x8մմ	տ	21.578	700000	15104600
26	Թերթապողպատ t=10մմ	տ	4.527	618000	2797686
27	Թերթապողպատ t=12մմ	տ	0.141	618000	87138
28	Թերթապողպատ t=16մմ	տ	0.858	618000	530244
29	Թերթապողպատ t=20մմ	տ	7.35	618000	4542300
30	Մետաղակառուցվածքների պատրաստում գործարանային պայմաններում	տ	34.454	200000	6890800
31	Մետաղակառուցվածքների մաքրում, նախաներկում եւ ներկում հրակայուն ներկով 2 շերտ	տ	34.454	32000	1102528
32	Մետաղական հեծանների տեղադրում	տ	55.492	200000	11098400
33	Ուղղանկյուն կտրվածքի խողովակ 100x60x3մմ	տ	12.726	650000	8271900
34	Ուղղանկյուն կտրվածքի խողովակ 140x60x4մմ	տ	35.190	650000	22873500
35	Քառակուսի կտրվածքի խողովակ 160x4մմ	տ	4.760	650000	3094000
36	Անկյունակ L90x6մմ	տ	1.210	650000	786500
37	Անկյունակ L50x5մմ	տ	0.373	650000	242450
38	Թերթապողպատ t=8մմ	տ	0.195	618000	120510
39	Թերթապողպատ t=6մմ	տ	0.794	618000	490692
40	Թերթապողպատ t=20մմ	տ	0.244	618000	150792
41	Չեղույս M12 /պնդողակ, տափօղակ/	կգ	34.2	3000	102600
42	Չեղույս M16 բարձրամուր /պնդողակ, տափօղակ/	կգ	44.6	3000	133920
43	Մետաղակառուցվածքների պատրաստում գործարանային պայմաններում	տ	55.492	200000	11098400
44	Մետաղակառուցվածքների մաքրում, նախաներկում եւ ներկում հրակայուն ներկով 2 շերտ	տ	55.492	32000	1775744
45	Մետաղական ֆերմաների տեղադրում, պատրաստումով	տ	16.059	200000	3211800
46	Քառակուսի կտրվածքի խողովակ 60x3մմ	տ	6.347	650000	4125550
47	Ուղղանկյուն կտրվածքի խողովակ 100x60x3մմ	տ	9.683	650000	6293950
48	Թերթապողպատ t=8մմ	տ	0.007	618000	4326
49	Թերթապողպատ t=10մմ	տ	0.022	618000	13596
50	Չեղույս M16 բարձրամուր /պնդողակ, տափօղակ/	կգ	1.7	3000	5100
51	Մետաղակառուցվածքների պատրաստում գործարանային պայմաններում	տ	16.059	220000	3532980
52	Մետաղակառուցվածքների մաքրում, նախաներկում եւ ներկում հրակայուն ներկով 2 շերտ	տ	16.059	32000	513888
53	Սենդվիչ պանելների ամրացման հիմնակմախքի հրականացում	տ	6.978	206000	1437468
54	Քառակուսի կտրվածքի խողովակ 60x3մմ	տ	6.357	550000	3496350
55	Անկյունակ L50x5մմ	տ	0.224	550000	123200
56	Թերթապողպատ t=8մմ	տ	0.397	618000	245346
57	Չեղույս M12 /պնդողակ, տափօղակ/	կգ	101.4	3000	304200
58	Մետաղակառուցվածքների մաքրում, նախաներկում եւ ներկում հրակայուն ներկով 2 շերտ	տ	6.978	32000	223296
59	Պատուհանների եւ դռների ամրացման տարրերի տեղադրում «Սենդվիչ» պանելների հիմնակմածքում	տ	0.443	309000	136887
60	Թերթապողպատ — 80x50x3մմ /ծռված/	տ	0.330	618000	203940
61	Թերթապողպատ — 100x100x3մմ /ծռված/	տ	0.113	618000	69834
62	Ինքնախարսխվող հեղույսներ M10x120մմ	հատ	480	500	240000
63	Մետաղակառուցվածքների մաքրում, նախաներկում եւ ներկում հրակայուն ներկով 2 շերտ	տ	0.443	32000	14176
ԸՆդամենը՝ շինարարական աշխատանքներ					173975474

2. Ճարտարապետական մաս

Պատեր					
64	Որմնախարսխային հատվածների երեսպատում սրբատաշ բազալտե սալերով 30մմ հաստությամբ	մ ²	89.000	25000	2225000
65	Որմնախարսխային հատվածների երեսապատում 20մմ էքստրուդացված փրփրապոլիստիրոլի սալերով (37-40կգ/խմ խտության)	մ ²	89.000	2600	231400
66	Խցաբութակներ Ø8մմ, երկ.80մմ էքստրուդացված փրփրապոլիստիրոլի սալերը ամրացնելու համար	հատ	356.000	50	17800
67	Մետաղական ցանց 30x30մմ բջիջով որմնախարսխային հատվածների երեսապատման համար	մ ²	89.000	1200	106800

1	2	3	4	5	6
68	Պատերի կառուցում սենդվիչ պանելներից 100մմ հաստ., լցանյութը բազալտե հանքաքամբակ 120-140 կգ/մ ³ խտությամբ, թիթեղը 0.5մմ	մ ²	630.000	31000	19530000
69	Ձեւավոր էլեմենտների տեղադրում թիթեղից, 0.5մմ հաստության, սենդվիչ պանելների ամրացման համար /ըստ նախագծի/ ՁԷ-1, L=250մ, b=0.28	մ ²	70.000	36000	2520000
70	Ձեւավոր էլեմենտների տեղադրում թիթեղից, 0.5մմ հաստության, սենդվիչ պանելների ամրացման համար /ըստ նախագծի/ ՁԷ-2, L=250, b=0.21	մ ²	52.500	36000	1890000
71	Ձեւավոր էլեմենտների տեղադրում թիթեղից, 0.5մմ հաստության, սենդվիչ պանելների ամրացման համար /ըստ նախագծի/ ՁԷ-3, L=48, b=0.62	մ ²	29.800	36000	1072800
72	Ձեւավոր էլեմենտների տեղադրում թիթեղից, 0.5մմ հաստության, սենդվիչ պանելների ամրացման համար /ըստ նախագծի/ ՁԷ-4, L=13, b=0.052	մ ²	0.680	36000	24480
73	Ձեւավոր էլեմենտների տեղադրում թիթեղից, 0.5մմ հաստության, սենդվիչ պանելների ամրացման համար /ըստ նախագծի/ ՁԷ-5, L=90, b=0.21	մ ²	18.900	36000	680400
74	Ձեւավոր էլեմենտների տեղադրում թիթեղից, 0.5մմ հաստության, սենդվիչ պանելների ամրացման համար /ըստ նախագծի/ ՁԷ-6, L=90, b=0.126	մ ²	11.300	36000	406800
75	Ձեւավոր էլեմենտների տեղադրում թիթեղից, 0.5մմ հաստության, սենդվիչ պանելների ամրացման համար /ըստ նախագծի/ ՁԷ-7, L=90, b=0.25	մ ²	22.500	36000	810000
76	Ձեւավոր էլեմենտների տեղադրում թիթեղից, 0.5մմ հաստության, սենդվիչ պանելների ամրացման համար /ըստ նախագծի/ ՁԷ-8, L=396, b=0.165	մ ²	65.300	36000	2350800
77	Ձեւավոր էլեմենտների տեղադրում թիթեղից, 0.5մմ հաստության, սենդվիչ պանելների ամրացման համար /ըստ նախագծի/ ՁԷ-9, L=108, b=0.204	մ ²	22.000	36000	792000
78	Սենդվիչ-պանելների յուղազերցում	մ ²	630.000	200	126000
79	Սենդվիչ-պանելների նախաներկում	մ ²	630.000	900	567000
80	Սենդվիչ-պանելների բարձրորակ ներկում երկու շերտ և գեղազիտա-կան նկարազարդում, համաձայն էքստերիերի դիզայներական նախագծի	մ ²	630.000	2000	1260000
81	Արտաքին պատերի երեսապատում հրակայուն գիպսաստվարաթղթե սալերով 12մմ /2 շերտ/, մետաղական հիմնակմախքով	մ ²	568.000	7500	4260000
82	Արտաքին պատերի երեսապատում ջրակայուն գիպսաստվարաթղթե սալերով 12մմ /2 շերտ/, մետաղական հիմնակմախքով	մ ²	60.000	7500	450000
83	Ձերմամեկուսիչ (կիսակոշտ բազալտե հանքաքամբակ 60կգ/մ ³ խտությամբ)	մ ²	628.000	6500	4082000
84	Դյուբել	հատ	942.000	50	47100
85	Ճկուն ժապավեն	զմ	753.600	80	60288
86	Կարանների ժապավեն	զմ	942.000	80	75360
87	Ծեփամածիկ կարանների համար	կգ	314.000	300	94200
	Միջնորմներ				
88	Միջնոցմների իրականացում երկու կողմից երեսապատված ջրակայուն գիպսաստվարաթղթե սալերով 12մմ /2 շերտ/, մետաղական հիմնակմախքով	մ ²	700	8500	5950000
89	Միջնոցմների իրականացում երկու կողմից երեսապատված ջրակայուն գիպսաստվարաթղթե սալերով 12մմ /2 շերտ/, մետաղական հիմնակմախքով	մ ²	329	8500	2796500

1	2	3	4	5	6
90	Ջայնամեկուսիչ	մ ²	1029	4600	4733400
91	Դյուբել	հատ	1544	50	77200
92	Ճկուն ժապավեն	զմ	1234.8	80	98784
93	Կարանների ժապավեն	զմ	1543.5	80	123480
94	Ծեփամածիկ կարանների համար	կգ	514.5	300	154350
95	Սանհանգույցների պլունինե բաժանարար միջնորմների տեղադրում	մ ²	35.2	40000	1408000
Դռներ					
96	Ալյումինե դռների տեղադրում, եռաշերտ (4+12+4+12+4) ապակեփաթետով, շրջանակը՝ պլունինե պրոֆիլ ջերմահաղորդականությունը նվազեցնող շերտով, ներքեի մասը ջերմամեկուսիչ շերտով սենդվիչ /ներառյալ ապակեփաթեթը, սարքերը, ներկումը/ բացվող	մ ²	35.88	79000	2834520
97	Ալյումինե դռների տեղադրում, եռաշերտ (4+12+4+12+4) ապակեփաթետով, շրջանակը՝ պլունինե պրոֆիլ ջերմահաղորդականությունը նվազեցնող շերտով, ներքեի մասը ջերմամեկուսիչ շերտով սենդվիչ /ներառյալ ապակեփաթեթը, ներկումը/ չբացվող	մ ²	3.75	55000	206250
98	Փայտյա հենակմախքով, ՊՎՔ երեսապատումով դռների տեղադրում /խուլ եւ ապակեպատ/	մ ²	107.1	100000	10710000
99	Մետաղական դռան տեղադրում	մ ²	1.9	80000	152000
100	Ալյումինե դռների տեղադրում, սանհանգույցների խցիկների համար /ներառյալ ապակեփաթեթը, սարքերը, ներկումը/	մ ²	6.72	55000	369600
Պատուհաններ					
101	Մետաղապլաստե, եռաշերտ (4+12+4+12+4) ապակեփաթեթով, հինգ խցիկանի պրոֆիլով պատուհանների տեղադրում /ներառյալ ապակեփաթեթը, սարքերը, ներկումը/ բացվող	մ ²	59.4	30000	1782000
102	Մետաղապլաստե, եռաշերտ (4+12+4+12+4) ապակեփաթեթով, հինգ խցիկանի պրոֆիլով պատուհանների տեղադրում /ներառյալ ապակեփաթեթը, ներկումը/ չբացվող	մ ²	85.2	26000	2215200
103	Ալյումինե պատուհանների տեղադրում, եռաշերտ (4+12+4+12+4) ապակեփաթետով, շրջանակը՝ պլունինե պրոֆիլ ջերմահաղորդականությունը նվազեցնող շերտով /ներառյալ ապակեփաթեթը, սարքերը, ներկումը/ բացվող	մ ²	18.12	54000	978480
104	Պլաստմասե պատուհանագոգերի 200մմ լայնությամբ	զմ	89.0	3000	267000
Վիտրաժներ					

1	2	3	4	5	6
105	Այլունիմե վիտրաժների տեղադրում, եռաշերտ (4+12+4+12+4) ապակեփաթետով, շրջանակը՝ այլունիմե պրոֆիլ ջերմահաղորդականությունը նվազեցնող շերտով, ներքեվի մասը ջերմամեկուսիչ շերտով սենդվիչ /ներառյալ ապակեփաթեթը, ներկումը/ չբացվող	մ ²	43.64	55000	2400200
106	Այլունիմե վիտրաժների տեղադրում, երկշերտ (4+12+4) ապակեփաթետով, շրջանակը՝ այլունիմե պրոֆիլ ներքեվի մասը ջերմամեկուսիչ շերտով սենդվիչ /ներառյալ ապակեփաթեթը, ներկումը/ չբացվող	մ ²	16.6	79000	1311400
Հատակներ					
107	Ենթաշերտի իրականացում բազալտե խճից 20-40մմ	մ ³	251.0	10000	2510000
108	Հարթեցնող նախաշերտի պատրաստում ցեմենտ-ավազային շաղախից 50մմ հաստությամբ	մ ²	1255.1	3600	4518360
109	Անխոնավանցիկ պոլիէթիլենային թաղանթից շերտի իրականացում	մ ²	1255.1	250	313775
110	Ջերմամեկուսիչ շերտի իրականացում էքստրուդացված փրփրապոլիստիրոլի սալերով 30մմ հաստությամբ	մ ²	1255.1	2650	3326015
111	Հարթեցնող երեսավաղի պատրաստում ցեմենտ-ավազային շաղախից 40մմ հաստությամբ	մ ²	304.2	3200	973440
112	Հարթեցնող երեսավաղի պատրաստում ցեմենտ-ավազային շաղախից 48մմ հաստությամբ	մ ²	740.8	3600	2666880
113	Հարթեցնող երեսավաղի պատրաստում ցեմենտ-ավազային շաղախից 35մմ հաստությամբ	մ ²	210.1	3000	630300
114	Ջրամեկուսիչ շերտի իրականացում 1 շերտ իզոգամից, բիտումային մածիկի վրա	մ ²	210.1	2100	441210
115	Հատակի պատրաստում չսահող մամլագրանիտից, 10մմ հաստությամբ	մ ²	304.2	10500	3194100
116	Վինիլային հատակի պատրաստում, հաստ 2 մմ, 0.7մմ պաշտպանիչ շերտով	մ ²	740.8	10000	7408000
117	Խեցեսալե հատակի պատրաստում, 10մմ հաստությամբ	մ ²	210.1	10300	2164030
Տանիք					
118	Տանիքի ծածկույթի պատրաստում ԿՊ-35 ծալքավոր թիթեղից, 0.5մմ հաստությամբ, գործարանային ներկածածկույթով, անկալլ	մ ²	1670	9000	15030000
119	Տաշտակածե ջրորդանի պատրաստում, 150մմ տրամաչափի, գործարանային ներկածածկույթով թիթեղից	զմ	300	5100	1530000
120	Ջրահեռացման խողովակների տեղադրում Ø120մմ, h=3.5մ, գործարանային ներկածածկույթով	կ-տ	23	20500	471500
121	Լուսամուտների բռնակ-փակիչների տեղադրում - 1 հատ եւ ծխնիների 2 զույք տեղադրում	կ-տ	5	5100	25500
122	Լուսամուտների յուղաներկում	մ ²	2.24	1800	4032
123	Տանիքի պատուհանների պատրաստում ներառյալ շերտափեղկերը 750x850մմ չափերի	հատ	5	67000	335000
124	Տանիքի պատուհանների եւ շրջակա տարածքի պատում գործարանային ներկածածկույթով ցինկապատ թիթեղով 0.5մմ հաստությամբ	մ ²	50	8800	440000

1	2	3	4	5	6
125	Հոսանոցների պատրաստում գործարանային ներկածածկույթով ցինկապատ թիթից 0.5մմ հաստությամբ	մ ²	62	9200	570400
126	Տանիքի պիպի իրականացում գործարանային ներկածածկույթով ցինկապատ թիթից 0.5մմ հաստությամբ /L=240մ/	մ ²	96	9200	883200
127	Քիվի կախվածքի տակի երեսապատում ձեւավոր թիթից սալերով	մ ²	210	9200	1932000
128	Ձնարգելիչների տեղադրում	զմ	230	6000	1380000
Ներքին հարդարում					
129	Կախովի առաստաղի պատրաստում հրակայուն գիպսաստորաթղթե սալերից 9մմ հաստությամբ, մետաղական հիմնակմախքով	մ ²	1078.3	7500	8087250
130	Կախովի առաստաղի պատրաստում ջրակայուն գիպսաստորաթղթե սալերից 9մմ հաստությամբ, մետաղական հիմնակմախքով	մ ²	176	7500	1320000
131	Գոլորշամեկուսիչ թաղանթ կախովի առաստաղի վրա	մ ²	1254.3	1000	1254300
132	Ջերմամեկուսիչ բազալտե հանքաբամբակից 200մմ (4x50մմ շերտերով, 35կգ/մ ³), կախովի առաստաղի հենակմախքի վրա	մ ²	1254.3	15000	18814500
133	ՑԹՍ սալերի կավարամածի պատրաստում 50x50մմ փայտե չորսուներից	մ ²	1254.3	400	501720
134	50x50մմ փայտե չորսուների արժեքը L _{ընդ.} =2700մ	մ ³	6.75	210000	1417500
135	ՑԹՍ սալերի կավարամածի պատրաստում 50x50մմ փայտե չորսուներից, մշակում հակաձեւիչ և հակահրդեհային մածիկով 2 շերտ	մ ²	1254.3	700	878010
136	Պատերի սվաղում ցեմենտ-ավազային շաղախով բարելավված որակի	մ ²	255.6	2800	715680
137	Պատերի երեսպատում հախճասալով	մ ²	255.6	11000	2811600
138	Պատերի ներկում լատեքսային ներկով, բարելավված որակի, ծեփամածկումով	մ ²	2313.1	2200	5088820
139	Առաստաղի ներկում ջրաէմուլսիոն ներկով, բարելավված որակի, ծեփամածկումով	մ ²	1254.3	2200	2759460
Արտաքին աստիճաններ					
140	Խամքարաբետոնե զանգվածի պատրաստում B7.5 դասի բետոնով	մ ³	20	69000	1380000
141	Նախապատրաստական շերտի իրականացում B10 դասի բետոնից	մ ³	7	73500	514500
142	Արտաքին աստիճանների, հարթակների եւ թեքահարթակների երեսապատում 30մմ հաստության բազալտե սալերով	մ ²	70	29000	2030000
143	Աստիճանների բազրիքի պատրաստում	տ	0.866	600000	519600
144	Խողովակ Ø50x3.5մմ	կգ	342	550	188100
145	Խողովակ Ø32x3.2մմ	կգ	140.0	550	77000
146	Ուղղանկյուն կտրվածքի խողովակ □30x20x2մմ	կգ	195	550	107250
147	Խողովակ Ø20x1.5մմ	կգ	189	550	103950
148	Բազրիքի յուղաներկում 2 շերտ	մ ²	36	2500	90000
Տարբեր աշխատանքներ					
150	Հաշմանդամների սանհանգույցի բռնակների տեղադրում	հատ	4	26000	104000
151	Հաշմանդամների սանհանգույցի ծալովի բռնակների տեղադրում	հատ	4	63000	252000

1	2	3	4	5	6
	Ընդամենը՝ ճարտարապետական մաս				182011574
3.Չեռուցում					
152	Բետոնե նախապատրաստական շերտի իրականացում B7.5 դասի բետոնից, ընդգետնյա առվակի տակ	մ ³	24.85	63000	1565550
153	Ընդգետնյա առվակի իրականացում ե/բ հավաքովի վաքերից /Ող4-8-1, Ող4-8/	մ ³	29.9	195000	5830500
154	Ընդգետնյա առվակի ե/բ միաձույլ հիմքի պատրաստում B12.5 դասի բետոնից	մ ³	0.9	73000	65700
155	Ամրանային ցանց Bp 100x100x3մմ	տ	0.015	787000	11805
156	Ընդգետնյա առվակի ե/բ միաձույլ պատերի պատրաստում B12.5 դասի բետոնից	մ ³	2.03	94500	191835
157	Ամրանային ցանց Bp 100x100x3մմ	տ	0.033	787000	25971
158	Ե/բ հավաքովի ծածկի սալերի տեղադրում վաքերի վրա Ող5-8, L=0.74մ, այդ թվում 5 հատ շարժական	հատ	313	8400	2629200
159	Ե/բ հավաքովի ծածկի սալերի տեղադրում վաքերի վրա Ող5-8*, L=0.28-0.68մ	հատ	22	7400	162800
160	Առվակի ցանցավոր մետաղական կափարիչների տեղադրում /60x78սմ/, 2 հատ	տ	0.016	2000000	32000
161	Առվակի ծածկի սալերի տակ անկյունակների տեղադրում L63x63x5մմ, L=22մ	տ	0.106	2000000	212000
162	Խողովակների տակ հենարանային բարձիկների տեղադրում /ՕՍ-1/	հատ	1000	1050	1050000
163	Ենդգետնյա կոնվեկտորի ե/բ փոստրակի իրականացում 1.75x0.3x0.25(Մ)մ, B12.5 դասի բետոնից	մ ³	0.42	94500	39690
164	Ամրանային ցանց Bp 100x100x3մմ	տ	0.007	787000	5509
165	Փոստրակի եզրի մետաղական անկյունակների տեղադրում անկյունակների տեղադրում L36x36x3մմ	տ	0.015	1050000	15750
166	Առվակի մետաղական մասերի ներկում հակակոռոզիոն ներկով 2 շերտ	տ	0.13	31500	4095
167	Առվակի արտաքին մակերեսի մեկուսացում բիտումով /աշխատավարձը հաշի է առնված վաքերի տեղադրումում/	մ ²	500	1200	600000
168	Խողովակաշարի անցկացում պոլիպրոպիլենային խողովակներից Ø15/20x1.9/մմ, PN10, հիդրավլիկ փորձարկումով	զմ	203	1050	213150
169	Խողովակաշարի անցկացում պոլիպրոպիլենային խողովակներից Ø20/25x2.3/մմ, PN10, հիդրավլիկ փորձարկումով	զմ	42	1100	46200
170	Խողովակաշարի անցկացում պոլիպրոպիլենային խողովակներից Ø25/32x3/մմ, PN10, հիդրավլիկ փորձարկումով	զմ	92	1600	147200
171	Խողովակաշարի անցկացում պոլիպրոպիլենային խողովակներից Ø32/40x3.7/մմ, PN10, հիդրավլիկ փորձարկումով	զմ	115	2700	310500
172	Խողովակաշարի անցկացում պոլիպրոպիլենային խողովակներից Ø40/50x4.6/մմ, PN10, հիդրավլիկ փորձարկումով	զմ	145	4000	580000
173	Խողովակաշարի անցկացում պոլիպրոպիլենային խողովակներից Ø50/63x5.8/մմ, PN10, հիդրավլիկ փորձարկումով	զմ	135	6000	810000
174	Պոլիպրոպիլենային խողովակների անկյունակներ Ø20մմ	հատ	180	80	14400
175	Պոլիպրոպիլենային խողովակների եռաբաշխիչներ խցուկով Ø20մմ	հատ	170	150	25500

1	2	3	4	5	6
176	Պոլիպրոպիլենային խողովակների ձեւավոր մասեր Ø20-63մմ /տարբեր/	հատ	320	1000	320000
177	խողովակների անցումներ մետաղ/պլաստմասսա Ø20մմ	հատ	170	1500	255000
